ՆԱԽԱԳԻԾ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«___» _____ 2014թ. N _____-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2015-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կերարտադրության և անասնաբուծության զարգացման 2015-2017 թվականների ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելվածի:
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝ տնտեսական տարին ավարտելուց հետո՝ մեկամսյա ժամկետում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն ներկայացնել հաշվետվություն՝ կատարած աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության կառավարության
2014 թվականի _____-ի
N _____-Ն որոշման

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2015-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ-2014 ԹՎԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

I. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անասնաբուծությունը հանդիսանում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության առաջատար ճյուղերից մեկը, որը բնակչությանը մատակարարում է այնպիսի անփոխարինելի սննդամթերքներ՝ ինչպիսիքն են կաթը և միսը:

Ներկայումս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անասնաբուծությունը իրենից ներկայացնում է զարգացած ենթաճյուղեր ունեցող մի ոլորտ, որտեղ անասնաբուծության վարման ավանդական տեխնոլոգիաներին զուգահեռ կիրառվում են ժամանակակից տեխնոլոգիաներ, ինչը հնարավորություն է ընձեռում տեղի բնակլիմայական պայմաններին առավելագույնս համապատասխանեցնել գյուղատնտեսական կենդանիների այս կամ այն տեսակի բուծումը և մթերատվության բարձրացումը: Անասնաբուծության զարգացումը և մթերատվության բարձրացումը պայմանավորված է անասունների լիարժեք կերակրմամբ, վերարտադրության և գենոֆոնդի պահպանմամբ, ինչպես նաև նոր, բարձր մթերատու անասունների ներկրմամբ, տրամախաչմամբ ու բարելավված սերունդների լիարժեք օգտագործմամբ:

Ծրագրով ներկայացվում են 2015-2017 թվականների բազմամյա կերային մշակաբույսերի մշակության (այսուհետ՝ կորնգան) համար իրականացվելիք միջոցառումները և ակնկալվող արդյունքները:

I. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ինչպես հայտնի է, 2014 թվականին բնակլիմայական անբարենպաստ պայմանները բացասաբար են անդրադարձել բնական կերահանդակների՝ արոտավայրերի ու խոտհարքների բերքատվության վրա, ինչը կարող է հետագայում խնդիրներ ստեղծել անասունների կերակրման առումով՝ ազդելով կենդանիների մթերատվության վրա, քանի որ, ինչպես վկայում են վերջին տարիների ուսումնասիրությունները, պետական տարբեր ծրագրերի, այդ թվում՝ գյուղատնտեսության զարգացման ենթաշրջանային ծրագրերի, վարկավորման ընդլայնման և այլնի արդյունքում հանրապետությունում տարեցտարի ավելանում է գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը:

Հաշվի առնելով գյուղատնտեսության համախառն արտադրանքում անասնաբուծության ճյուղի տեսակարար կշռի ավելացման անհրաժեշտությունը, անասնագլխաքանակի աճի միտումները և դրանով պայմանավորված անասնակերի բազայի կայունացման կարևորությունը, ինչպես նաև հողերի արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը, առաջարկվում է շրջանների առկա չմշակվող և բազմամյա կերաբույսերի մշակության համար պիտանի տարածքները դնել կորնգանի մշակության տակ:

Սույն Ծրագրի հիմնական նպատակն է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կերային կայուն բազայի ստեղծումը, հաշվի առնելով անասնաբուծության զարգացման դրական առաջընթացը:

Ծրագրի խնդիրներն են՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բոլոր շրջաններում գյուղատնտեսության ճյուղերի համաչափ զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում,
2. կերարտադրության և անասնաբուծության զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծում,
3. առկա գյուղատնտեսական նշանակության հողերի լիարժեք օգտագործման և բարելավման համար հնարավորությունների ստեղծում:

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ծրագրի իրականացման գործընթացում ներգրավված պետական կառավարման մարմինները իրականացնում են հետևյալ միջոցառումները՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) համակարգում և վերահսկողություն է իրականացնում կորնգանի սերմացուի ձեռք բերման և տրամադրման գործընթացի նկատմամբ.

2) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերը՝ նախարարություն են ներկայացնում տեղեկություններ՝ նշելով համայնքը, կորնգան մշակելու ցանկություն ունեցող հողօգտագործողների տվյալները և կորնգանի մշակության համար տարածքների մակերեսները:

Նախարարությունը, շրջանների վարչակազմերից տեղեկությունները ստանալուց հետո, հողօգտագործողներին մեկ հեկտար հողատարածքի դիմաց անհատույց տրամադրում է 100 կիլոգրամ կորնգանի սերմացու:

Սույն ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով նախատեսված համապատասխան միջոցներից:

III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համապատասխան ներդրումներ կատարելու դեպքում Ծրագրի իրականացումից ակնկալվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համայնքներում գյուղատնտեսական ոլորտում կերարտադրության և անասնաբուծության զարգացման առաջընթաց, որն առաջիկա տարիներին կդրսևորվի հետևյալ արդյունքներով՝

1. դրական տեղաշարժեր կլինեն բուսաբուծության և անասնաբուծության ներճյուղային կառուցվածքում,
2. կավելանան կորնգանի տարածքները, կաթի և մսի համախառն արտադրությունը,
3. կորնգանի մշակությունը դրական ազդեցություն կունենա գյուղատնտեսական հողատեսքերի բերրիության բարձրացման վրա: Այն որպես ցանքաշրջանառության կարևոր օղակ կնպաստի դաշտերի մոլախոտերից մաքրմանը, հողի կառուցվածքի բարելավմանը և ազոտով հարստացմանը, կբարձրանա նրանից հետո մշակվող կուլտուրաների բերքատվությունը,
4. անասնագլխաքանակի ավելացման արդյունքում կբարձրանա բնական կերահանդակների օգտագործման մակարդակը,

5. տեղական արտադրության հաշվին կբարձրանա անասնաբուծական մթերքներով ապահովվածության մակարդակը,
6. բուսաբուծական և անասնաբուծական մթերքների արտադրության ծավալների ավելացումը կնպաստի վերամշակման ճյուղի զարգացմանը,
7. կավելանա միավոր տարածքից ստացվող արտադրանքի քանակը,
8. գյուղատնտեսության ոլորտի գործունեության արդյունքում կբարձրանա բնակչության զբաղվածության մակարդակը, կավելանան եկամուտները:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2015-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

Անհրաժեշտությունը

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կերարտադրության և անասնաբուծության զարգացման 2015-2017 թվականների ծրագիրը հաստատելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կառավարության որոշման նախագծի ներկայացումը պայմանավորված է անասունների լիարժեք կերակրման համար կերային կայուն բազայի ստեղծման անհրաժեշտությամբ:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Որոշման նախագծի խնդիրներն են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բոլոր շրջաններում գյուղատնտեսության ճյուղերի համաչափ զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, կերարտադրության և անասնաբուծության զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, առկա գյուղատնտեսական նշանակության հողերի լիարժեք օգտագործման և հողերի վիճակի բարելավման համար հնարավորությունների ստեղծումը:

Նպատակը և բնույթը

Սույն որոշման նախագծի նպատակը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում բազմամյա կերային մշակաբույսերի տարածքների ընդլայնմամբ անասունների համար կերային բազայի ապահովումն է և ցանքատարածությունների կառուցվածքի բարելավումը:

Առաջարկվում է հողօգտագործողներին մեկ հեկտար հողատարածքի դիմաց անհատույց տրամադրել 100 կիլոգրամ կերային մշակաբույսի՝ կորնգանի սերմացու:

Ակնկալվող արդյունքը

Ծրագրի իրականացումից ակնկալվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համայնքներում գյուղատնտեսական ոլորտում կերարտադրության և անասնաբուծության զարգացման առաջընթաց:

Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք

Նախագիծը մշակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչության և իրավաբանական բաժնի կողմից:

Այլ տեղեկություններ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կերարտադրության և անասնաբուծության զարգացման 2015-2017 թվականների ծրագիրը հաստատելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2015-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կերարտադրության և անասնաբուծության զարգացման 2015-2017 թվականների ծրագիրը հաստատելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում: Նախագծի ծախսերը կնախատեսվեն յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2015-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կերարտադրության և անասնաբուծության զարգացման 2015-2017 թվականների ծրագիրը հաստատելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

ՆԱԽԱՐԱՐ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2015-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կերարտադրության և անասնաբուծության զարգացման 2015-2017 թվականների ծրագիրը հաստատելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

ԼՂՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Ա. ԳԱԼՍՏՅԱՆ

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Որոշման նախագծի անվանումը՝

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կերարտադրության և անասնաբուծության զարգացման 2015-2017 թվականների ծրագիրը հաստատելու մասին»

Նախագիծը ներկայացնողը՝

ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն

ԼՂՀ կառավարության և ԼՂՀ վարչապետի որոշումներն ուղարկել՝

1. ԼՂՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԼՂՀ արդարադատության նախարարություն
3. ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն
4. ԼՂՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ
5. ԼՂՀ շրջաններ

Նախագիծը պատրաստողը՝

ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչություն և իրավաբանական բաժին

_____ Ա. ԳԱԼՍՏՅԱՆ

(ստորագրությունը)

«_____» _____ 2014թ.